

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՊՀ պրոբեկտոր

Է. Վ. Ասրիյան



19.05.2023 p.

ԿԱՐԾԻՔ

## ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ավետիս Լորիսի Գրիգորյանի «Սոթք զավառը միջին դարերում ըստ տատմահնագիտական աղբյուրների» Է 00. 03. «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի մայիսի 17-ին նիստում քննարկվեց Ավետիս Լորիսի Գրիգորյանի «Սոթք գավառը միջին դարերում ըստ տատմահնագիտական աղբյուրների» աշխատանքը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման առենախոսության վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Ավետիսյանը, պ.գ.դ., Պավել Ավետիսյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Բորովյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Գնունին, պ.գ.թ., դոցենտ Մ. Գաբրիելյանը:

Ելույթ ունեցան Հ. Ավետիսյանը, Մ. Գաբրիելյանը և Հ. Հարությունյանը: Նիստի մասնակիցները արձանագրում են հետևյալը.

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք զլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից, հավելվածներից, քարտեզներից, նկարներից:

Աշխատանքը աչքի է ընկնում ինատիպությամբ, քանի որ հանդիսանալով պատմահնագիտական հետազոտություն, լուսաբանում է ըստ հնագիտական աղբյուրների

մեկ առանձին վերցրած տարածաշրջանի պատմությունը և նյութական մշակույթը մոտ 1300 տարվա ընթացքում: Պետք է նշել, որ հեղինակն ամբողջացնում է ոչ միայն գոյություն ունեցող պատմագիտական և հնագիտական տվյալները, այլև սեփական դաշտային նյութը:

Ներածությունում հեղինակը արժնորում է Սոթքի տարածաշրջանը, նշելով դրա տեղը և դերակատարումը Հայաստանի միջնադարյան պատմությունում: Այնուհետև հեղինակը ներկայացնում է դաշտային հետազոտությունների պատմությունը, որոնք հիմք են հանդիսացել ատենախոսական աշխատանքի համար: Իրավացիորեն նշվում է աշխատանքի նորարական բնույթը: Մասնավորապես առաջին անգամ մանրամասնորեն ներկայացվում և քննարկվում են Սոթք գավառի միջնադարյան հուշարձանների պեղումների արդյունքները, գիտական շրջանառության մեջ են մտցվում տարածաշրջանի հուշարձանների պեղումներից ձեռք բերված ռադիոածխածնային անալիզի տվյալները, նկարագրում և քննում է շուրջ երկու տասնյակ խաչքարեր և 60 տապանաքարեր: Էական հանգամանք է, որ հեղինակի հետազոտությունները մեծապես ընդլայնում են աշխատանքի աղբյուրագիտական հենքը ներկայացնելով և վերծանելով շուրջ 40 նորահայտ վիմագիր արձանագրություն: Հատկանշական է, որ հեղինակն օգտագործելով հնագիտական սկզբնաղբյուրները ներկայացնում է զավառի բնական պաշարների և հաղորդակցության ճանապարհների շահագործումը միջնադարում: Կարևոր նշանակություն ունի սկզբնաղբյուրների տվյալների բազայի ստեղծումը:

Հեղինակն իրավացորեն ընդգծում է աշխատանքի գիտական և գիտա-գործնական նշանակությունն արդի պայմաններում:

Հեղինակը շարադրում է աշխատանքի համառոտ բովանդակությունն ըստ գլուխների:

Ներածական հատվածը եզրափակում է գրականության տեսությունը: Որպես աշխատանքի շահեկան կողմ պետք է նշել, որ հեղինակն օգտագործված գրականությունը դասդասում է ըստ բնույթի, առանձնացնելով հնագիտական, պատմագիտական և հուշարձանագիտական բնույթի հետազոտությունները:

Առաջին գլուխը նվիրված է Սոթք գավառի պատմաաշխարհագրական նկարագրին և հետազոտության պատմությանը: Առաջին ենթագլխում ներկայացված է զավառի լանդշաֆտը և սահմանները: Էական հանգամանք է, որ հեղինակը քննում է շրջանի սահմանները պատմական կտրվածքով, հանգելով այն կարևոր եզրկացության, որ զավառի անտիկ և միջնադարյան պատկերը զալիս է ուրարտական և ավելի վաղ ժամանակաշրջանից չնշին փոփոխություններով: Առաջին գլխի երկրորդ ենթագլխում զավառի զարգացման

պատմական ակնարկն է: Հեղինակը ջանասիրաբար ներկայացնում և վերլուծում է սկբնադրյուրային հենքը, օգտագործելով ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներ վաղմիջնադարից՝ մինչև XVIII դար: Առաջին գլխի երրորդ ենթագլուխը նվիրված է տարածաշրջանի ուսումնասիրության պատմությանը:

Երկրորդ գլխում ներկայացվում են ուսումնասիրվող տարածաշրջանի հնագիտական հուշարանները: Հեղինակն առանձին-ռանձին նկարագրում է ամրոցները, պարսպապատ սրբավայրերը, բաց բնակատեղիները: Առանձնապես հետաքրքիր է, որ հեղինակն ուշադրություն է դարձնում ձողաշեն կառույցների ճարտարապետությանը: Հեղինակն անդրադարձ է կատարում նաև արտադրական կառույցներին: Առանձնապես հետաքրքիր է բնակավայրերի տեղանունների նույնականացումը և համադրումը պատմիչների, մասնավորապես Ստեփանոս Օքբեյանի տվյալների հետ: Աշխատանքի անկասկած առավելությունների թվին է պատկանում GIS համակարգի միջոցով ամրոցների տեղակայման համակարգի վերլուծությունը: Հեղինակը հանգում է համոզեցուցիչ հետևողությունների ամրոցների տեղագրման տրամաբանության վերաբերյալ: Այս գլխում հեղինակը քննության է առնում նաև վանական համալիրները և անապատները: Դրական պետք է գնահատել այն հանգամանքը, որ հեղինակը համադրում է մատենագրական և հնագիտական տեղեկությունները: Այնուհետև քննվում են տարածաշրջանում հայտնաբերված խաչքարերը և տապանաքարերը: Այս հատվածն իր բնույթով միջմասնագիտական է: Այսուեղ պարունակվում են և արվեստաբանական, և մարդաբանական բնույթի տեղեկություններ: Անշուշտ առավելություն է հանդիսանում այն հանգամանքը, որ հեղինակը բժախնդրորեն վերլուծում է թաղման կառույցները, համադրում համաժամանակյա համալիրների հետ, փորձում դիտարկել պատմական գուգահեռներ:

Երրորդ գլուխը նվիրված է Սոթքի նյութական մշակությին: Հեղինակը քննության է առնում խեցեղենը դիտարկելով հասարակ, ջնարակված և շինարարական խեցեղենը: Կարևոր հանգամանք է աշխատանքում խեցեղենի համապարփակ և մանրակրկիտ նկարագրությունն և տիպարանությունը: Նյութական մշակույթի նմուշները դիտարկվում են որպես սկզբնադրյուր հին հաղորդակցության ուղիների վերակազմության համար: Հեղինակը դիտարկում է նաև կարևոր խնդիր, կապված ջրային ուղիների և ձկնորսության զարգացման հետ:

Աշխատանքի արժեքավոր հատվածներից է հավելվածների բաժինը, որտեղ ներկայացվում են Սոթքի հուշարձանների, վիմագիր արձանագրությունների, հայ և օտար

մատենագրական սկզբնաղբյուրների, ձեռագրերի հիշատակարանների և պարսկական հրովարտակների համահավաքները:

Աշխատանքում ներկայացված քարտեզները կատարվել են բարձրորակ քարտեզագրական հիմքի վրա:

Այսքանով հանդերձ աշխատանքում առկա են մի շարք թերացումներ, որոնք բնակչեն ստվերում հեղինակի կատարած ահոելի աշխատանքը: Մասնավորապես առկա են խմբագրական բնույթի վրիպակներ, օր՝ անհամապատասխանություններ հղվող գրականությունում և գրականության ցանկում հիշատակվող գրականության տվյալներում: Աշխատանքում առկա են որոշ վրիպակներ և խմբագրական անձշտություններ: Թերևս կարելի էր խուսափել պատմիչների տեղեկությունների բառացի մեջբերումից, բավարարվելով միայն համեմատական աղյուսակով:

Բովանդակային խնդիրներից պետք է նշել այն, որ միշտ չէ հստակ ձևակերպված և շինարարական տեխնիկայի վերլուծությամբ ամրագրված թե որքանով են վաղ շրջանի ամրոցները որպես այդպիսիք ծառայել նաև միջնադարում:

Նշված թերացումները չեն նսեմացնում հեղինակի կատարած աշխատանքը, փաստացիորեն Սոթք զավառի պատմական հանրագիտարան հանդիսացող աշխատանքի գիտական և գիտագործական նշանակությունը, ուստի Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն միջնորդում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի հնագիտություն և ազգագրություն 007 մասնագիտական խորհրդին շնորհել ատենախոսության հեղինակին հայցվող գիտական կոչումը:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ.

Հ. Գ. Ավետիսյան

*Հ. Ավետիսյան*

Պ.գ.դ., պրոֆ. Հ. Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտութար, բ.գ.թ. *Դ. Ա. Ղուկասյան*

Ա. Վ. Հովհաննիսյան



19.05.2023